ԷԴՈՒԱՐԴ ԼԻՊԱՐԻՏԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Կյանքից հեռացավ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երկարամյա աշխատակից, Հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ. գ. դ. Էդուարդ Դանիելյանը:



Դժվար է հավատալ, որ այլևս մեզ հետ չէ պատմաբան, հրաշալի գործընկեր, նվիրյալ հայագետ Էդուարդ Դանիելյանը: Թերևս միակ մխիթարությունն այն է, որ նա հայ պատմագիտության մեջ թողեց մնայուն գործեր և իր իսկ խոսքերով՝ միշտ հավատարիմ մնաց հայ պատմագիտության հայագիտական-խորենացիական դպրոցին:

Էդուարդ Դանիելյանը ծնվել է 1944 թ. փետրվարի 18-ին Երևանում: 1961–1966 թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի աշխարհագրական ֆակուլտետը, 1966–1972 թթ.՝ Երևանի պետական Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի օտար լեզուների ֆակուլտետը (անգլերեն լեզու), 1968–1971 թթ.՝ Հայաստանի ԳԱԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրան: 1972 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ “Անտիկ տիեզերագիտական հայացքների արտացոլումն Անանիա Շիրակացու “Տիեզերագիտութիւնում” և “Աշխարհացոյց”-ում թեմայով: 1988 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ “Հայ-բյուզանդական քաղաքական հարաբերությունները Սասանյան Պարսկաստանի մայրամուտին և Արաբական խալիֆայության սկզբնական շրջանում” թեմայով:

1971–1978 թթ. նա ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գիտաշխատող էր, 1978–1989 թթ.՝ ավագ գիտաշխատող, մինչև 2010 թ. առաջատար գիտաշխատող, 2010 թվականից՝ Հին դարերի պատմության բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող: Միաժամանակ Դանիելյանը Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների համալսարանում Երկրագիտության ամբիոնի վարիչ էր մինչև 2006 թ.:

Է. Դանիելյանի գիտական հետաքրքրությունների ոլորտում Հայոց հին և միջնադարյան պատմության հիմնահարցերն էին՝ կապված Հայկական լեռնաշխարհում հայ ժողովրդի տեղաբնիկության, ավելի քան հինգհազարամյա հայկական պետականության, պատմական աշխարհագրության ու տիեզերաբանական պատկերացումների, քրիստոնեության և Հայ Առաքելական Եկեղեցու վաղ պատմության, հայ-իրանական ու հայ-բյուզանդական հարաբերությունների, Արցախի խնդիրների և բազում այլ հարցերի հետ: 2015 թվականից նա "Հիմնարար հայագիտություն" (Fundamental Armenology) անգլալեզու էլեկտրոնային հանդեսի հիմնադիրն ու գլխավոր խմբագիրն էր, ավելի քան 200 աշխատությունների հեղինակ:

Էդուարդ Դանիելյանի անունը միշտ վառ կմնա հայրենի երկրի հայագետների սրտերում:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական
գիտությունների բաժանմունք

"Ազգ", 28.VII.2017